Universitäts- und Landesbibliothek Bonn

Erusaġemi Youkannês Episkoposi t'uġt'ę

Vaġaršapat, 1896

urn:nbn:de:hbz:5:1-59647

Visual Library

Goussen 3330

Q3330

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԱԲԱՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

(*Արտատպած «ԱՐԱՐԱՏ» ամսագրից*)։



ՎԻՆՆԻՊԵՂԻ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

1896

3330

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր ձեռքը շատ քիչ են հասել այնպիսի պատմական յիշատակարաններ, որոնք միջոց տային մեր ազգային եկեղեցւոյ ի սկզբանէ անտի արտաքինների հետ ունեցած յարաբերութիւնը պարզաբանելու եւ նորա դիրքը հարեւան եկեղեցիների նկատմամբ որոշելու համար: Այդ յիշատակարանների կարգում մեզ ծանօթ ամենահներից մէկը ներկայ՝ Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի գրած, թուղթն է Աղուանից կաթուղիկոսին: Դաւանաբանական տեսակէտից նորա արժէքը շատ չնչին է. գրուած է նա այն մեծամիտ, հակառակասէր հոգւով, որ Յունաց եկեղեցւոյ ներկայացուցիչներից շատերին յատուկ է (ի բաց առեալ հարկաւ մեծ հայրերը): Բաւական է օրինակ այդ թուղթը մեր հրատարակած Օձնեցու թղթի հետ համեմատել, որպէս զի ամեն անաչառ ոք տեսնէ, թէ ինչպիսի տարբեր ոգիների ծնունդ են նոքա: Մէկը գրում է այն գիտակցութեամբ, թէ ով որ մեծ է, զօրեղ է, գիտուն է՝ իրա-

ունքն էլ նորանն է։ հակառակորդի հայեացքները նա ամենեւին նկատողութեան չէ առնում՝ վերագրում է նորան կարծիքներ՝ բարդում է նորա վերայ մեղադրանքներ՝ որոնք բոլորովին խորթ են նորա համար՝ դատարկ օդի հետ է կռուում։ միւսը գրում է ճշմարիտ քրիստոնէի եւ անձնուէր հովուի գիտակցութեամբ։ նա գիտէ թէ ում հետ գործ ունի՝ չափում կշռում է հակառակորդի բոլոր պատճառաբանութիւնները՝ բայց եւ իւր կենդանի համոզումը համարձակ խոստովանելուց չէ քաշուում՝ պաշտպանելով միանգամայն այն համոզումը՝ թէ ճշմարտութիւնն ու արդարութիւնը ձայների բազմութիւնից կախուած չեն։ Այսպէս ահա Յովհաննէս եպիսկոպոսի թղթից մենք ոչ մի գաղափար չենք կարող կազմել հայոց Զ։ դարում ունեցած դաւանութեան մասին՝ բայց մի շարք խիստ կարեւոր պատմական տեղեկութիւններ կարող ենք առնել նորա արտաքին յարաբերութիւններին վերաբերեալ։

Մեր ուշադրութիւնը վաղուց արդէն գրաւել էր այն հանգամանքը՝ ուր դաւանա-

քանական վէճերի մէջ, ի մասնաւորի վրայ քա-
ժանման առթիւ գրուած թղթերում՝, հայերը
յաճախ Երուսաղէմի անունն են յիշում՝ իրենց
ծէսերի, աւանդութիւնների նախնական լինե-
լը Երուսաղէմի հեղինակութեամբ հաստատում:
Պէտք էր եզրակացնել, որ հայերը շատ հին
ժամանակից կապ են ունեցել Երուսաղէմի
հետ, եւ ներկայ թուղթը աւելի ոյժ է տալիս
այն եզրակացութեան. իսկ նորա մէջ ակնար-
կուած պատմական եղելութիւնները գնահա-
տելու համար առանձին նշանակութիւն ունի
ըստ մեզ ձեռագիրներում գտնուող «Վասն
սուրբ ժողովոցն, որ եղեն ի Հայս ի սրբոյն Գրի-
գորէ սկսեալ վերնագրով անանուն գրուած-
քի հետեւեալ հատուածը. «Վեցերորդ ժո-
ղով արար Ներսէս Մ՝իջին ի Դբունի եւ քա-
ժանեաց զՀայս ի հոռոմց եւ յԵրուսաղէմ
գնալոյ, յորում՝ խոստմունս մեծ արար խոս-
րով, թագաւորն, պարսից Ներսէսի, եւ ի ձեռն
այսր ժողովոյ վիրք եւ Հորրորդ Հայք որոշե-
ցան ի հայոց ձեռնադրութենէ. իսկ Աղուանք
եւ Սիւնիք առ ժամանակ մի եւ դարձեալ
միացան»: Այս յիշատակարանի համաձայն

Հայոց եւ հարեւան եկեղեցիների մէջ առաջին անգամ յայտնի երկպառակութիւն ընկնում է Ներսէս Բ. Աշտարակեցու Դուինում գումարած ժողովից յետոյ, եւ այդ բոլորովին համապատասխան է իրերի պատմական ընթացքին: Մինչեւ Յուստին Ա. կայսեր թագաւորելը (518—527 թ.) յոյն հռոմէական պետութեան մէջ անորոշ էր դեռ, արդեօք միթէ երկու բնութեան ուսումը յաղթող պէտք է ելնէ եւ վերջին երկու կայսրները (Զենոն եւ Անաստաս) աւելի դէպի առաջին խնդրի պաշտպանութիւնն էին հակուած, որին կողմնակից էր նաեւ արեւելեան եկեղեցոյ մեծագոյն մասը: Սակայն երբ Յուստին Բ. եւ նորանից յետոյ Յուստինիանոս Մեծ Քաղկեդոնի ժողովի վարդապետութիւնը վերջնականապէս տիրապետող դարձրին, մի բնութեան ուսումը կարող էր միայն պետութեան սահմաններից դուրս պաշտպանութիւն գտնել. եւ հայերն, ինչպէս վերեւի հատուածից երեւում է, այդ պաշտպանութիւնը վայելելով՝ Դուինի ժողովում որոշեցին հաստատուն մնալ իրենց համոզման մէջ եւ պահպանել իրենց ինքնուրոյ-

նութիւնը: Բնականաբար նոքա պէտք է աշխատէին այդ ժողովի վճիռներին ենթարկել նաեւ այն բոլոր երկիրները, որոնց վերայ տարածուում էր իրենց ազդեցութիւնը, եւ մենք կաղանկատուացու պատմութիւնից եւս տեսնում ենք, որ Աղուանից նկատմամբ այդ յաջողուում է: Կաղանկատուացին պահել է Ներսէսի յաջորդ Յովհաննէս Բ. կաթուղիկոսի Աբասին գրած մի թուղթը, որին իբրեւ հետեւանք նորա ասելով Աբաս «հալածեաց ի տանէն Աղուանից զվարդապետս կրօնին այնմիկ (քաղկեդոնականութեան)՝ զԹովմասն եւ զԵղիայն եւ զԲնոտն եւ զԻրաս:» Պարզ է, որ այդ տեղ խօսքը նոյն Թովմասի մասին է, որ յիշուում է Յովհաննէս եպիսկոպոսի թղթում: Այս թուղթը գրուած կարող է լինել միայն այնպիսի ժամանակ, երբ Աղուանից եկեղեցին դեռ որոշ հաստատուն դիրք չէր բռնել քաղկեդոնականութեան դէմ: քայց եթէ արդէն Բաքկէնի 491 թուին գումարած ժողովում հայերն աղուանից ու վրաց հետ քաղկեդոնի ժողովը մերժած լինէին, ինչպէս ուրիշ յիշատակարանները վկայում են, Երուսաղէմի

եպիսկոպոսի ոտնձգութիւնը 60-70 տարի յետոյ քոլորովին անտեղի եւ անժամանակ պէտք է համարուէր: Ուրեմն քոլոր հանգամանքները միաբանելով հաստատում են վերեւի այն վկայութիւնը, թէ հայերն առաջին անգամ Դուինի ժողովով բաժանուեցան ի Հռոմոց կամ որ նոյն է, քաղկեդոնական դարձած յոյն—հռոմէական եկեղեցուց: Յուստինի եւ Յուստինիանոսի քաղաքականութիւնը նոյն հետեւանքն ունեցաւ այստեղ, ինչոր ունեցել էր Ասորիքում եւ Եգիպտոսում՝ հանդէսեկաւ մի որոշ կազմակերպութիւն ունեցող առանձին ազգային եկեղեցի: Ժամանակակից քոլոր արեւելեան Քրիստոնեայ ազգերի մէջ նկատելի է մի տեսակ կեղրոնախոյս զօրութիւն, եւ վերեւի վկայութիւնը ցոյց է տալիս, որ այդ զօրութեան ենթարկուում են ոչ միայն Վիրք եւ Աղուանք, այլ եւ Հայաստանի երկու սահմանագլուխ նահանգները: Նոցա քոլորի համար եկեղեցական կեանքի կեդրոն Հայոց Մայր աթոռն էր եղել վաղուց ի վեր. Վրացիք ուրեմն առաջին անգամ Ներսէս Բ-ի օրով բաժանուեցան այդ կեդրոնից, առելի ենթարկուած լինելով

Ցունաց ազդեցութեան քան միւս նահանգները. իսկ Մովսէս Եղուարդեցին, Կիւրիոնին նոցա կաթուղիկոս նշանակելով՝ առ ժամանակ միայն ենթարկեց կրկին իւր իրաւասութեան, մինչեւ որ յետոյ վերջնականապէս բաժանուեցան:

Այն հանգամանքը, որ Դուինի ժողովն կարեւոր էր համարել հոռոմների հետ յարաբերութիւն կտրելուց յետոյ Երուսաղէմ գնալն եւ արգելել, ցոյց է տալիս, թէ ինչքան հեղինակութիւն ունէր Երուսաղէմը եւ ինչքան կարեւոր էր խոյս տալ նորա ազդեցութեան ենթարկուելուց: Յովհաննէս եպիսկոպոսի խօսքերից երեւում է, որ արդէն նորա նախորդները անուշադիր չէին թողել այդ հանգամանքը եւ եթէ նոքա աշխատել են իրենց թղթերով Աղուանից կաթուղիկոսներին համոզել, նոյնն արած կլինէին նաեւ Հայոց նըկատմամբ: Դժբաղդաբար կարելի չեղաւ մեզ ձեռքի տակ եղած աղբիւրներով Յովհաննէսի եպիսկոպոսութեան տարիները որոշել, որպէս զի գոնէ մի աղօտ գաղափար կազմէինք այդ բոլոր իրողութեանց ժամանակագրական ընթաց-

քի մասին: Յովհաննէս ներկայանում է իբրեւ յաջորդ Մակարեւ Եւստոքիոս եպիսկոպոսների, որոնցից ա. ը Երուսաղէմի պատրիարք է ընտրուել 546 թ. ին եւ բ. ը դեռ կենդանի էր 553 թ. ին, եւ. տիեզերական կոչուած ժողովի ժամանակ, մինչդեռ նամիայն չորս տիեզերական ժողովներէ յիշում եւ առ հասարակ նորա թղթի բովանդակութիւնը այդ ժողովից առաջ տիրող պայմաններին աւելի համապատասխան է գալիս: Այնուհետեւ Աբղիշոյ ասորին, որնորա ասելով, եղեւ առաջնորդ կորստեանն Հայոց, եւ կամ ժողովոյն Հայոց Յովհաննէս կաթուղիկոսի Աբասին գրած թղթի մէջ յիշուած է նորա կողմնակից եպիսկոպոսների թուում, որից հետեւում է, որ նորա խօսքը Յովհաննէսի կաթուղիկոսութեան ժամանակաւ ոչ շատ հեռու մի ժողովի մասին է, ուրեմն յամենայն դէպս Ներսէս Աշտարակեցու եւ ոչ Բաբկէնի գումարած ժողովի մասին: Աբաս, կաղանկատուացու ասելով, Աղուանից կաթուղիկոս է ընտրուել «յերկրորդ ամին Խոսրովու արքայից արքային, յորժամ սկիզբն հայ թուականին եղեւ:» Այդ երկու թուականներից մէկը միայն ուղիղ կա-

ղող է լինել, որովհետեւ Յոսրովի երկրորդ տարին 532 ,կամ՝ 533 թ·նէ եւ ոչ Հայոց թուականի սկիզբը՝ 551 թ·ը, եւ հաւանականաբար աւելի ուղիղ է ա·ը եւ ոչ բ·ը, որովհետեւ 551 թ·ին Աբասի ժամանակակից Յովհաննէս կաթուղիկոսը, ինչպէս սովորաբար մեր պատմութեան մէջ ընդունուում է (թէ եւ հակառակ ցուցումներ եւս կան) կենդանի չէր այլ եւս, այլ նորա յաջորդ Մովսէս Եղուարդեցին էր իշխանութիւն վարում: Իսկ եթէ ուղիղ է, որ Աբաս քառասուն եւ չորս տարի կաթուղիկոսութիւն է արել, այն ժամանակ մի ընդարձակ շրջան է մնում, որի համար դժուար է, նոյն իսկ մօտաւորապէս, այն տարիները որոշել, որոնց միջոցում նա Երուսաղէմի եպիսկոպոսից թուղթ պէտք է ստացած լինի:

Այս թղթի մէջ մեր եկեղեցւոյ պատմութեան համար կարեւորութիւն ունեցող մի կէտն էլ այն հալածանքն է Հայոց վանքերի դէմ, որի մասին տգեղ ու ինքնահաւան բաւականութեամբ խօսում է Երուսաղէմի եպիսկոպոսը: Ցաւալի է միայն, որ այս մասին մենք ուրիշ աղբիւրներից տեղեկութիւններ չունենք եւ

չենք կարող այստեղ մութ մնացած մի քանի կէտերը պարզել. երբ են արդեօք հայոց վանքեր հաստատուել Երուսաղէմում՝ ովքեր էին նոցա պաշտպանող իշխանները, ի՞նչ հետեւանք ունեցաւ այն հալածանքը: Դիտողութեան արժանի է նաեւ այն հանգամանքը, որ հայերը այս վէճի մէջ «զկեսարիա կալան բարուրըս». խօսքն անշուշտ Կապադովկիոյ Կեսարիայի մասին է եւ եկեղեցական իրաւասութեան վերաբերեալ մի խնդրի հետ կապ ունի:

ԱՅՍ ԹՈՒՂԹ ՅՈՀԱՆՆՈՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Է

ԱՌ ԱԲԱՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹԱՒՂԻԿՈՍ։

Սրբոյ եւ աստուածասիրի երանելոյ հոգեւոր եղբօր եւ պաշտօնակցի մերոյ Աբասայ եպիսկոպոսի Աղուանից՝ ի Յոհաննէ եպիսկոպապետէ Երուսաղեմի։ Աստուածասէր Թումաս, երանելոյ Պանտավանայ վանական, ըստ սովորութեանն՝ որպէս յառաջ քան զմեզ յաջորդեալք սոսա աթոռոյն Յակովբայ Եղբօր Տեառն առեալ էր գիր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, նոյնպէս և ի մէնջ խնդրեաց և մատոյց տօմարս երկուս ժողովոյ, որ առանց Քրիստոսի ժողովեալ էր ի Հայս հակառակ սրբոյ Եկեղեցւոյ, և զանձինս իւրեանց ի ժառանգութենէն Քրիստոսի ի բաց հանին. զմին՝ զոր առաքեալ իսկ էր ի ձեր աշխարհդ, զի որոգայթեսցեն զձեզ յիւրեանց կորուստն, և զմիւսն սահման հաւատոյ իւրեանց ամբարշտու-

թեանն, յորում և ուսոյց զմեզ վասն բարեսէր կամաց Երանութեան Քումն եթէ ընդ բարեաւք ճանապարհ հաւատոյ և գործոյ ընթանաս. զոր մեր լուեալ՝ յոյժ ուրախ եղաք։ Բայց լուաք, թէ ոմանք յիշխանութենէդ Քումմէ ընկալան զայնպիսի անոտի և ստեղծական բանս խաբէութեան և Սրբութիւնդ Քո ոչ ել ի վերայ նոցա։ Ո՞չ գիտես, եթէ զամենայն իրս առաքինութեան ոք գործիցէ և նախանձ ոչ ունիցի՝ ո՛չ է կատարեալ սէր ի նմա. զի կատարեալ սէր ի բաց մերժէ զերկեղ և նախանձեցուցիչ առաւելեալ սիրոյ առ Աստուած, որպէս Փենեհէզին և Եղիայն, որ վասն նախանձուն Աստուծոյ գովեցան ի Յեառնէ, որ ասաց իսկ Ինքն, եթէ Ես Աստուած նախանձոտ եմ և զփառս իմ այլում ոչ տամ և ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց։ Արդ մեք, որ ըստ նմանութեան Աստուծոյ արարաք, պարտիմք զԱրարչին մերոյ ունել զնախանձ, որպէս ս. Պօղոս ասէ, եթէ Նախանձաւորք լերուք գործոց բարեաց. և ոչ է արժան տալ զփառս Աստուծոյ Նեստորի և Նեսեբի և Պետրոսի Անտիոքացւոյ և Յուլիանոսի Աղիկառնացոյ, և ոչ զքաջութիւն Աստուծոյ Աբգիշոյի Ասորոյ, որ եղև առաջնորդ կորստեանն Հայոց և կամ ժողովոյն Հայոց։ Հայեա՛ց և տես, թէ ո՛րպէս հեղի և ազգն նորա մերժեցան յերեսաց Աստուծոյ ի Հքահանայանալն նը-

մաս։ Եւ դարձեալ զի ասէ, թէ Վա՛յ որ գործէ զգործ Տեառն հեղգութեամբ. և դարձեալ զթագաւորացն Իսրայէլի որպէս ասէ, թէ Արարին ուղղութիւնս առաջի Աստուծոյ, սակայն ի բարձանց ոչ մեկնեցան, զի տակաւին ժողովուրդն զոհէր ի բարձունս և խունկս արկանէր՝ թոյլ տալ թագաւորացն ժողովրդեանն զոհել ի բարձունսն, եթէ կցորդք են մեղաց նոցա։ Քանզի Պօղոսի զնոյն երկեղ կալեալ յանձին ասէր, թէ Անպարտ եմ ես յարենէ ձերմէ, քանզի ո՛չ խորշեցայ պատմել ձեզ զամենայն կամս Աստուծոյ։ Եւ դարձեալ ասէր. Զգո՛յշ լերուք ի շանց անտի, զգո՛յշ լերուք ի չար մշակաց անտի, որ գան առ ձեզ զգեստուք ոչխարաց և ինքեանք են գայլք յափշտակողք։ Շո՛ւնս կոչեաց զայնպիսիսն վասն լրբութեան նոցա և անառակութեան, և գայլս կոչեաց վասն յանդգնութեան նոցա, չար մշակս վասն զի նենգեն զբանն Աստուծոյ, և զգեստուք ոչխարաց, որպէս թէ կերպարանօք ճշմարտութեան, որ զչար որոմունս մշակութեան իւրեանց մինչև այսր սերմանեցին։ Զորս ես նզովեցի և հալածեցի և քաղաքս դեռ այրէր զվանան մի հայոց, մինչև հալածեալքն առ թագաւորն գնացին՝ ասելով, եթէ հալածեաց ըզմեզ հայրապետն Երուսաղեմի։ Իսկ Բարեպաշտութիւն Նորա գրեաց առ մեզ, եթէ բարի՞ ոք արարեր ըստ կանոնաց զիրսդ խնդրելով, զի

եթէ այդպիսեացդ թոյլ ոք տացէ իւրեանց ամբարշտութեանն, և այլ ճարակ ասա դտանեն, զոր դժուար ոք կարէ ուղղել՝ մանաւանդ զարտաքին ազգդ, որ ոչ կարեն իմանալ զմիտս գրոց և ըստ յառաջընկալ սովորութեան իւրեանց զչարափառութիւն իբրև զբարեպաշտութիւն համարին։ Այլ և հերձուածդ իսկ հայոց անգլուխ է և ընդ բազում հերձուածքս միաւորի։ Եւ իբրև ի գրոց ինչ ոչ կարացին ցուցանել իշխանքն հայոց, առ իս աղաչանս առաքեցին, եթէ առաջին թագաւորքն զվանս զայն մեզ իբրև զպարգև շնորհեցին նովիմբ ուսմամբն։ Որոց արարի պատասխանի, թէ անհնար է թագաւորաց հերձուածս պարգև շնորհել։ Եւ ապա իբրև ոչինչ եկս գտեալ՝ լռեցին։ Բայց դու իմով հրամանաւ զհերձուածողսդ հան և զվանսդ ուղղափառաց տուր, և յելելոցն, որք կամէին ըստ եկեղեցոյ լինել, եթէ և ձեռնագրաւ զհերձուածսն նզովեն՝ մի՛ արգելուք, այլ սիրով ընկալարուք քանզի աբգէտք են։ Այնպէս և ի հայրապետէ նորա զիր ընկալայ, եթէ բարեպաշտ թագաւորս մեր ինձ ասաց, եթէ վասն եկեղեցոյ իրաց զիս աշխատ զի առնէք։ մեզ արտաքին իրաց և պատերազմաց է հոգալ, եկեղեցոյ և ճշմարիտ հաւատոյ գործ եպիսկոպոսաց է՝ քննեցէք և հաստատուն պահեցէք և զիս և զաշխարհս։

Իսկ ես կոչեցի զիշխանս հայոց և բազում

ինչ խօսեցայ, և նոքա զԿեսարիա կալան բա-
բուրս. և ես ասեմ, թէ Կեսարիայն հաճոյ է
ձեզ, երթա՛յք ի Կեսարիայն կացէք. բայց յերու-
կուս քաղաքս թագաւորականս յայտնի հերո-
ձուածոցի ոչ տամք բնակել՝ ի յԵրուսաղէմ
Երկնաւոր թագաւորին և մերս երկրաւոր, և
վասն այլ տիեզերաց իւրաքանչիւր եպիսկո-
պոսունք գատապարտին, եթէ անփոյթ առնեն։
Եւ ապա հայք հաղորդեցան, և եթէ մնայ
ոք՝ հաղորդիլ ունին։ Բայց Դու Տէ՛ր, ըստ
թագաւորի հրամանին զվանագ կարգաւորեա՛
և մաքուր պահեա՛ զքաղաքագ, և ես նոյնպէս
կարգաւորեցի, որպէս թագաւորն հրամայեաց.
այլ և այլ վանորեայսագ որ ի քաղաքիս և որ
արտաքոյ, զոր միանգամ ծանուցին՝ ըստ
եկեղեցոյ կարգաւորեցի։ Եւ ես թէպէտ և էյօ-
ժարէի յայլոց ի թագաւորութիւն այդպիսի
ինչ գրել, բայց յորժամ չարալուր գիրն հա-
յոց ի լսելիս իմ եհաս, հարկաւորեցայ գրել.
քանզի մեզ զահն Տեառն գիտելով չափ, ո՛վ
եղբարք, ոչ է պարտ ծուլանալ և թոյլ տալ.
քանզի ասէ. Ահ մեծ է անկանել ի ձեռս Աս-
տուծոյ կենդանոյ։ Վասն զի դէտ կացոյց զմեզ
Աստուած ի վերայ տանն Իսրայէլի. ապա է-
թէ դէտն ոչ աղաղակեսցէ և ոչ զգուշացու-
ցանիցէ՝ զարիւն նոցա ի ձեռաց դէտին խընդ-
դրեցից։ Արդ, մի՛ եղբարք պարտական արեան
գոցուք յաւուրն յայնմիկ, յորժամ բանք

սպառին և գործք թագաւորեն, այլ մանաւանդ ըստ Պօղոսի, որպէս վերագոյնն ասացաք, թէ Անպարտ եմ ես յարենէ ձերմէ, քանզի ոչ խորշեցայ պատմել ձեզ զամենայն կամս Աստուծոյ։ Զայս աղերսելով ասէր Պօղոս. իսկ դարձեալ և սաստիւք ասէ. Ցանգիմանեա՛, սաստեա՛, մխիթարեա՛ ամենայն սաստիւ, զի մի ոք իցէ, որ զքո մանկութիւնդ արհամարհիցէ։

Նոյնպէս և Սրբութեանդ Ձերոյ պարտ է հովուել և վարդապետել զհաւատացեալ Ձեզ յԱստուծոյ հօտդ ամենայն զգուշութեամբ, հայել ի պատուիրանս Աստուծոյ և քննել զգիրս սուրբս, որպէս և Տէրն ասաց, թէ քննեցէ՛ք զգիրս և տեսէք, յորս համարիք ունել զկեանսն յաւիտենից։ Եւ դարձեալ առաքեալն ասէ. թէ Հանապազ քննէին զգիրս և տեսանէին, թէ այս այսպէս իցէ. և ոչ որպէս հայքդ առանց քննելոյ զպատուիրանս Աստուծոյ՝ անկան ի վախից և հեռացուցին զանձինս իւրեանց ի միաբանութենէ եկեղեցոյ և աւտարացան ի շնորհացն Աստուծոյ։ Արդ, դո՛ւք եղբարք, զհետ երթայք սուրբ Եկեղեցոյ և մի յաջ և մի յահեակ խոտորիք՝ ունելով զհաւատս սուրբ Եկեղեցոյ, զոր ուսայք ի սուրբ առաքելոյն և ի նորին աշակերտացն՝ մինչև ի մեր ժամանակս անվրէպ և անսխալ։ Զի թէպէտ և հերձուածք եղեն բազում ի

յաշխարհի, որպէս և Պաւղոս ասէր, եթէ Հերձուածք լինելոց են՝ զի ընտիրքն երևեսցին։ և դարձեալ Պետրոս ասաց, եթէ Որպէս սիրելի եղբայրն մեր Պաւղոս, ըստ տուեցելոյ նմա իմաստութեան, բազում ինչ դժուարիմացս ասաց ի թուղթսն անդ իւրում, զոր անուսումքն և յողդողդքն կամակորեն առ ի կորուստ անձանց։ Իսկ մեք, այսինքն սուրբ Եկեղեցի, զայս տէրունական ձայն ունիմք, որ ասաց ցՊետրոս՝ գլուխ առաքելոցն, տալով նմա զգլխաւորութիւն հաւատոյ անշարժութեան եկեղեցեաց, թէ Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ՝ և դրրունք մի յաղթահարեսցեն զդա։ որում և զփականս երկնի և երկրի ետ՝ Պետրոսի, և որ մինչև ցայսօր ժամանակի զհաւատոց նորա զհետ երթան՝ աշակերտք նորա և վարդապետք կաթողիկէ եկեղեցոյ, կապեն և արձակեն։ զչարսն կապեն, և որ դան յապաշխարութիւն և ի զղջումն՝ արձակեն ի կապանաց։ մանաւանդ սուրբ և գլխաւոր և պատուական աթոռոյն նորա ժառանգորդք ուղիղ հաւատովք անսխալ ըստ տէրունական ձայնին, որպէս յառաջագոյն ասացաք, որոց հօտք են այսոքիկ։

Հաւատամք ի Հայր և յՈրդի և ի Հոգի սուրբ՝ Աստուած Ճշմարիտ։ խոստովանիմք մի էութիւն, որ է մի բնութիւն, երեք

անձինք, երեք դէմք, երեք կերպարանք՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, միաւորեմք զաստուածութիւնն, զտէրութիւնն, զանսկզբնական զօրութիւնն. որոշեմք զառանձնաւորութիւնն։ Զի Հայր Աստուած է և արարիչ և ամենակալ, անսկիզբն և անպատճառ, ծնող և ոչ ծնունդ։ Եւ Որդի Աստուած է և Արարիչ և ամենակալ, անսկիզբն՝ ծնունդ և ոչ ծնող որոյ պատճառք Հայր, անձառապէս Աստուած Բան։ Եւ Հոգի սուրբ Աստուած է և Արարիչ և ամենակալ՝ ընդ Հօր և ընդ Որդւոյ, ելոյ, Հոգի սուրբ և մխիթարիչ։ Այսպէս խոստովանիմք վասն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ աստուածութեանն։ Իսկ վասն անտեսութեան Ցեռան մերոյ Յիսուսի Քրիստոսի այսպէս խոստովանիմք. զՈրդի ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս անձառաբար, իսկ ի վերջին ժամանակս վասն մեր և վասն մերոյ փրկութեան մարմնացեալ և մարդացեալ ի Մարիամայ սրբոյ կուսէ Աստուածածնէ, և լեալ մարդ կատարեալ՝ Աստուած ճշմարիտ, և զերկոսեան զբնութիւն՝ զաստուածութեանն և զմարդկութեանն, անշփոթ պահեալ ի միում անձին և ի միում կերպարանի, որ կոչի մի Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ կենդանւոյ, չարչարեալ և խաչեալ մարմնով և անմահութեամբ անչարչարելի։— Զայս հաւատս հաստատեցին միաբանութեամբ սուրբ հարքն չորից

ժողովոց, այսինքն, որ ի Նիկիա ՅԺԸ. եպիսկոպոսք և որ ի Կոստանդնուպոլիս ՃԾ. և որ ի յԵփեսոս առաջին ժողովն Մ. և որ ի Քաղկեդոն ՈՂ. սուրբ հարքն։ Եւ վասն զի հայք յասորեաց խաբեցան, որ ելին արտաքոյ սրբոյ Եկեղեցւոյ վասն նզովելոյ նոցա զսուրբ ժողովն Քաղկեդոնի, և անկան յաղանդն Յուլիանոսի Աղիկառնասացոյ, որէ և սա ի բուսոյ որոմանն Դիոսկորի և Եւտիքի և Թէոդոսոսի, զի սոքա երեքեան ի միում ժամանակի զմի ամպարշտութիւն քարոզեցին, որք և նզովեցան իսկ ի ժողովոյն որ վասն նոցա, և վասն ասելոյ նոցա, թէ զմարմինն Տէրն յերկնից եբեր, և ոչ ի կուսէն ինչ առ ամենևին, այլ լոկ միայն ճանապարհորդեաց ընդ նա։ Իսկ այլքս, որ ի սոցանէ բուսան, այսինքն Տիմոթէոս Եղուրոս և Պետրոս Ծանրախօս, զոր Աղեկսանդրացի հայրապետս կոչեն, որք աքսորեցան վասն չար ամբարշտութեանն իւրեանց և մերժեցան ի ժառանգութենէն Քրիստոսի։ Եւ դարձեալ Գայիոս ևս եբեր և Պետրոս Անտիոքացի և Յուլիանոս Աղիկառնասացի, որք նորաձև ինն մուծին յաղանդն Եւտիքի, որպէս զի ցուցցեն զանձինս իւրեանց առ ի չար անդէրն առաւել իմաստուն, և եղեն պատճառք կորստեան անձանց իւրեանց և աշխարհի, զոյոյ բարբաջմունս՝ որով այժմ հեռացան հաղ յեկեղեցւոյ ասացուք։ —Յուլիանոս Աղիկառ-

նասացի ամբարշտեաց ասել, թէ մարմինն Քրիստոսի անապական և անմահ էր մինչև ցիտաչելութիւնն՝ որպէս յետ յարութեանն էր անապական և անմահ, նոյնպէս և յառաջ քան զյարութիւն. և մի բնութիւն ասաց Բանին և մարմնոյն Աստուծոյ, և շփոթումն և զանկումն և խառն անկումն արար, և զամենայն յոյս հաւատացելոց, որ ի ձեռն սուրբ խաչին եղև՝ ուրացաւ։ Զի թէ անմահ և անապական էր մարմինն Քրիստոսի, որպէս ասացըն՝ անմահութեամբ ուրացաւ զչարչարանսն և անապականութեամբն զյարութիւնն, զի ուր մահ չէ՝ և ոչ խաչ է, և ուր անապականութիւն՝ յարութեան պէտս ոչ ունի։ Վասն զի յարութիւն է, որ զապականացուսն անապական առնէ, որպէս առաքեալ ասէ, թէ Պարտ է ապականացուիս զգենուլ զանապականութիւն և մահկանացուիս՝ զանմահութիւն. քան զի ոչ նոյն ինքն է ապականացու բնութիւն և անապական, այլ ասեմք, եթէ միայն առանձին պատշաճ է Աստուծոյ բնութեանն և բովանդակ անապական և անշրջելի և անայլայլելի՝ և միշտ նոյնպէս ունի հանապազ. ո՛չ բարձումն և ո՛չ վերադրութիւն ունի, և անընդունակ է ախտից և մարմնաւոր չարչարանաց և մահու, զի բաւանդակ անապական է Աստուծոյ բնութիւն, այսինքն սրբոյ և երկրպագելի միանական սուրբ Երրորդութեանն,

ըստ առաքելոյ՝ որ ասէ. թէ Բայց թագաւորին յաւիտենից՝ անապականին և աներևոյթին, միայնոյն Աստուծոյ պատիւ և փառք յաւիտեանս։

Իսկ ապա եթէ ասիցես. և ո՞չ մի ինչ պատիւ Քրիստոսի առաւել քան մեզ ո՛չ տայցեմք՝ այս ոչ մեր ինչ է շնորհեալ Ցեառն Քրիստոսի, քանզի ոչինչ է կարօտ, բայց ըստ ճշմարտութեան բանիցն ասեմք՝ թէ վերագոյն քան զմեզ է մարմինն Ցեառն և ըստ մեզ ամենևին առանց մեղաց. վերագոյն քան զմեզ անմեղութեանն և միաբանութեան աստուածութեանն՝ քանզի ի սմանէ միաւորութիւն տնօրէնութեան՝ և ապա աստուածային և երկրպագելի. իսկ ընդունելութեանն անխոտելի ախտ իցէ՝ ըստ մեզ էր ըստ ամենայն՝ մինչև ի փրկական չարչարանս իւր և ի յարութիւն։ Իսկ զսուրբ և զտիեզերական ժողովն Քաղկեդոնի՝ զոր նզովեցին հայքդ՝ ոչք մոլորեցան ի ձեռն Արդեշոյի ասորոյ և ելին արտաքոյ սուրբ և կաթուղիկէ եկեղեցւոյ՝ վասն ասելոյ սուրբ ժողովոյն զտէր մեր Յիսուս Քրիստոս Աստուած կատարեալ և մարդ կատարեալ՝ Աստուած ճշմարիտ և մարդ ճշմարիտ՝ և յայտնապէս ցուցին զտնօրէնութեանն խորհուրդ՝ զոր և սուրբ ժողովն՝ որ վասն տնտեսութեան Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ասացեալ է ի սուրբ հաւատս՝ զնոյն

բանս եղից այնպէս։ Արդ, զհետ երթալով այժմ զսուրբ հարցն մեք՝ և զնոյն խոստովանել Որդի և Տէր մեր Յիսուս Քրիստոս համաձայն ամենեքեան ուսուցանեն՝ կատարեալ զնոյն ինքն յաստուածութեան և կատարեալ զնոյն ինքն ի մարդկութեան, Աստուած ճշմարիտ և մարդ ճշմարիտ, նոյն ինքն ի հոգոյն բանականէ և ի մարմնոյ, և հաւասար Հօր ըստ աստուածութեանն և հաւասար նոյն ինքն ըստ մարդկութեանս՝ ըստ ամենայնի նման մեզ, առանց մեղաց. որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ծնեալ ըստ աստուածութեան, ի վերջին ժամանակս ի Մարիամայ ի կուսէ ըստ մարդկութեանս. մի զՏէր Յիսուս Քրիստոս յերկուս բնութիւնս՝ զՄիածինն, անշփոթելիս, անշարժելիս, անբաժանելիս, անմեկնելիս ծանուցեալ, և ոչ ուրեք բնութեանցն զանազանութիւն ի բաց բառնալոյ վասն միութեանն, այլ ոչ պահելով զերկաքանչիւր բնութիւն ի միում գէմն՝ ի մի անձն զուգապէս. ոչ յերկուս գէմքս բաժանելով, այլ մի զնոյն Որդի, Միածին Աստուած Բանն՝ Տէր Յիսուս Քրիստոս։ Զայս խոստովանութիւն ասացեալ է վասն տնտեսութեան Տեառն մերոյ Յիսուսի սուրբ ժողովոյն որ ի Թալկեդոն, զոր և զգիր հաւատոյն առաքեցաք Սրբութեանդ Ձերում։

Իսկ վասն երկուց բնութեանցն, զոր ասացին սուրբ հարքս այսոքիկ, ոչ նորաձևու-

թիւն ինչ մուծին յԵկեղեցի սուրբ, այլ որ ի սկզբանէն քարոզեալ էր ի սուրբ առաքելոցն և ի նոցին հետևողացն, ի վարդապետաց եկեղեցոյ՝ զնոյն յայտնապէս ցուցին։ Քանզի ասացին երկուս բնութիւնս միաւորեալս ի Տեառնն մերում Յիսուսի Քրիստոսի. սակն անբաժանելիս, բայց ծանուցեալ և անշփոթս, քանզի որ զերկուս բնութիւնսն ոչ ամբողջ պահեսցէ ի Տեառնէն, այլ զմինն միայն խոսատովանի՝ ամենայն իրօք զմիւսն ուրանայ։ Այլ ասիցես արդեաւք. զիա՞րդ հնար է երկուս, որպէս Աստուածաշունչ գիրք ասացին՝ այսինքն ստացականին և անստացականին. քանզի մարմինն ստացական էր, իսկ Աստուածութիւնն՝ անստացական. և ինքն իսկ Տէրն ցուցանէ զերկուս բնութիւնսն յինքեան՝ յայտնապէս ասէր վասն աստուածութեանն, եթէ Ես և Հայր իմ մի եմք. և դարձեալ, եթէ Մի՛ զարմանայք, եթէ Որդի Մարդոյ է, զի եկեսցէ ժամանակ, զի լսիցեն մեռեալք ձայնի Որդւոյն Աստուծոյ, եւ որ ի կարգի։ Իսկ վասն մարդկային բնութեանն, թէ Պարտ է Որդոյ Մարդոյ բազում չարչարիլ. և դարձեալ, եթէ Զի՞ խնդրեք զիս՝ այր, որ զճշմարտութիւնն ձեզ խօսեցայ։ Զուգաբարբառ այսոցիկ քարոզն աշխարհի և առաքեալն Պաւղոս զերկուս բնութիւնսն Տեառն ի մի դէմս նշանակէ, ասէ. Որ ի կերպարանս Աստուծոյ էր ոչինչ յափշտա-

կութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ։ Արդ, ՞ուր զկերպարանս ծառայի դնիցես, զորոյ զբնութիւնն ի բաց ուրանալով համարձակի ասել՝ Անմահ խաչեցար, և անուանին հոգեմարտք և աստուածաչարչարք։ Բայց ձեզ ո՛չ է պարտ զհետ ասորեստանեայցդ մոլորել, այլ գալ զհետ պատուիրանաց տիեզերական եկեղեցոյ սուրբ յարութեանն։ Թէպէտ և ոչ գիտութեամբ ունիք զմիտս հերձուածոյդ Դիոսկուրի և զԱնտիոքացոյն, որ զանմահ խաչեցաւոր աւելացրեցին ի սուրբ Երրորդութեան ձայնի և իբրև ընդ պատրուակաւ մուծին զաշխարհ ի միտս Եւտիքի հերձուածոցն. և բազումք թէպէտ և ոչ գիտեն զմայր հերձուածոյդ, այլ ունին ի սովորութենէ իբրև դուքդ՝ պարտ է ձեզ լսել աշխատասիրաց յորժամ ծանուցին, եթէ հերձուածողական միաք բանիդ, և ոչ ի զրոց սրբոց։ Այլ և ձեզ պարտ է գրել, եթէ յետ ծանուցելոյն, որք ի նմին կայցեն, և ընդ նոցին հաղորդիցին, որ գիտակաւ զհերձուածն ունիցին՝ ոչ իբրև տգիտաց ներէ Աստուած յաւուրն յանդիմանութեան, այլ ընդ հերձուածողքն և ընդ հակառակորդքն դատի զնոցունց ձայնակիցսն։

Այլ պարտ է ձեզ լսել Պաւղոսի, որ ասէն, և զնոյն ձայն փառաբանել, եթէ Ոչինչ

եղի ի մոի գիտել ձեզ, բայց միայն զՅիսուս Քրիստոս և զնոյն ի խաչ ելեալ. և դարձեալ, եթէ Յիսուս Քրիստոս զրեցաւ ի խաչ ելանելոյ։ Զսոյն և երանելի առաքեալն Պետրոս ասէ, եթէ Քրիստոսի չարչարիլն մարմնով վասն մեր. թէպէտ և մեռաւ մարմնով՝ կենդանի է հոգով։ Եւ սուրբ աւետարանն ասէ. ԶՅիսուս ինդրէք՝ զՆազովրեցի գխաչեցեալն, և ոչ ոք ասաց զանմահ հոգին չարչարեալ և մեռեալ, այլ զՆազովրեցին, զոր ի մէնջն էառ և ընդ իւր միաւորեաց անբաժանելի. և ամենայն պատուիրանքս այսմ վկայեցին, եթէ Քրիստոս մարմնով իւրով չարչարեցաւ և մեռաւն, ոչ ոք զանմահ հոգին ասաց չարչարեալ և մեռեալ մանիքէաբար։ Քանզի բազում ի միտս արկանէ հերձուածոյ աւելադրութիւն բանիդ. բայց ձեզ պարտ է զսրբոյ աւետարանին զհետ երթալ և մի յաջ և մի յահեակ խոտորել, և ոչ զրոյս մերում կարօտանալ. զի ի ճշմարիտ ի հաւատս ոչ բռնութեամբ ինչ վայել է ածել, այլ կամօք խնդրել վասն երկեղի գեհենին։ Զի ահա և ի մերում քաղաքիս զբոտանին հրէայք և հեթանոսք, և քանզի զայս տեսանեն և խարխափին՝ մեք ոչինչ բռնութիւն առնեմք չկամողացն ի վերայ, զի աւր է, որ խնդրէ և դատի։ Բայց վասն քո Շրանութեանդ լուաք, եթէ կամակից ես բարւոյ և ընկալար թուղթս երկուս ի Մակարայ և յԵւստոքայ՝

ի ձեռն բարեպաշտի և աշխատասիրի թումասու, որ ոչինչ պէտս ունի ի ձէնջ պատուի և մեծութեան, բայց միայն ոգոց ձերոց փրկութեան. վասն որոյ և զիս թախանձեաց գրել ըստ օրինակին նոցա, որ յառաջ քան զմեզ էին նախընկալք սթոռոյս Յակոբայ առաքելոյ, և ես ինչ ոչ յապաղեցի ծանուցանել զբարեպաշտութիւն կամողացդ բարեպաշտութեան։ Ոչ միայն զմերս առաքեցաք, այլ և զպատճառս չորից ուղղափառ ժողովոցն գրել հրամայեցաք, զի դիտիցէք, եթէ վասն որոյ հերձուածոց ժողովեցան և զինչ սահմանեցին, և վասն յաւելագրութեան Անտիոքացոյն հրամայեցաք գրել զերանելեաց չորից հայրապետացն՝ զՀռոմայն և զայլոց ուղղափառ եպիսկոպոսաց, որ զԱնտիոքացոյն չարափառութիւնն յանդիմանեցին գրոց վկայութեամբ։ Եւ վասն Յուլիանոսի Աղիկառնասացոյ հերձուածոյն, որ զմարմինն Քրիստոսի օտարացոյց ի մերմէ բնութենէս և անապականացու անուանեաց մինչև ցխաչելութիւնն՝ և վասն այսր հերձուածոյ հրամայեցաք գրել զերանելեաց եպիսկոպոսացն՝ զՀռոմայն և Անտիոքայն զարքեպիսկոպոսացն։ Ընդ նոսին և զԹուզլեան Կիւրղի արքեպիսկոպոսին, որ զՆեստորի չարափառութիւնն յանդիմանեաց։ Զայս ամենայն թարգմանել և գրել հրամայեցաք աշխատասիրի թումասու քահանայի և առաքել Քում Բարեպաշ-

տութեանդ. զի ոչ միայն իմով գլուխ, այլ քան զմեզ լաւագունից թղթովք ուսուցանիցես զեպիսկոպոսակիցս քո, որ դիպող և ճշմարիտ վկայութեամբ են հաստատեալ ի սուրբ աւետարանէն և յառաքելոյն թուղթք նոցա, եթէ ոք կամիցի երկեղիւն Աստուծոյ ընդունել. Բայց միայն դու մի թագուցաներ և նենգեր զճշմարիտ վարդապետութիւն եկեղեցւոյ։

Բազում կցսրդք են խաչելութեանն Քրիստոսի, որպէս կամին ասել զՔրիստոս խաչեալ, բայց ի սուրբ Երրորդութեանն կարգ՝ ոչ Քրիստոսի երթայ խաչեցելոյն, այլ անմարմինն և անմահ հոգւոյն ասելն չարչարեալ և մեռեալ, և ապա սուտ պատճառեն, եթէ մեք զերեսեանն Որդւոյ ասեմք։ Հրեշտակին բարբառն հաւատարիմ է և հարցն առաջնոց և չորից ուղղափառ ժողովոցն, որ զսուրբ Աստուած զՀայր ասացին, սուրբ Հոգի՝ զՈրդի և սուրբ անմահ՝ զՀոգին սուրբ։ Այլ և ի սուրբ աւետարանին զնոյն գտանէք, եթէ Երթայք մկրտեցէք զաշխարհ յանուն Հօր, և ապա Որդւոյ և ապա Հոգւոյն սրբոյ։ Եւ արդ՝ յերիս ձայնսդ մի՛ ինչ յաւելուս, մի՛ մեռցին, մի՛ հոգի, մի՛ խաչ, և մի՛ չարչարանս, զի այդ փառատրութիւն սրովբէիցն է՝ յառաջ քան զմարդանալ Որդոյն Աստուծոյ է, որպէս ուսաք յԵսայեայ մարգարէէ։ Իսկ ուր Որդի միայն փառաբանի՝ անդ որպէս կամիս, յիշեա

զմարմնանալն, զխաչիլն, զչարչարիլն և զմի զխաչն անուան Յեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդոյն Աստուծոյ, որ խաչեցաւն և չարչարեցաւն և թաղեցաւն և յարուցեալ վերացաւ՝ անբաժանելի ի Հօրէ։ Ապա եթէ յանկարծակի հակառակութիւն ոք ի ներքս բերէ՝ յայնպիսեացն յեռ մի անգամ և երկիցըս խրատելոյ, հրաժարեա՛ զի թիւրեալ է, զի զանձնիշխանութիւն մարդոյ, ի բարի կամ ի չար՝ Աստուած ոչ բռնադատեաց, և ոչ ոք ի հոգելից մարգարէից կամ յառաքելոց, քանզի ասէ. Բարձի թոզի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց, և ապա զան առ իս և ես դատեմ զնոսա։ Նոյնպէս և մեք ի մերում քարոզիս զչկամողն բարեպաշտութեան ոչ բռնադատեմք, այլ միայն զապաստաւորսն եկեղեցոյ զբարեպաշտսն կարգաւորեմք։ Զսոյն և Շրանութեանդ քում պարտ է առնել, և որ ոչն կամին զլոյսն բարեպաշտութեան՝ երթիցեն ի խաւարն հերձուածողաց։

Բայց լուաք, թէ ոմանք յիշխանութենէդ քումմէ՝ բարեպաշտից նեղութիւն և հալածանս հասուցանեն. այդ անօրէնութիւն հեթանոսացն թագաւորաց է, որ Քրիստոսի խոստովանողացն զոհել հարկեցուցանէին. և դուք լսէք և ներէ՞ք այդպիսի անօրէնութեան և լինի՞ք հաղորդք նոցա անօրէնութեանց, որ

քան և մի՛ լիցի. այլ մեծաւ սրտմտութեամբ սատակել այնպիսեացն, զի դադարեսցին յայնպիսի անօրէնութենէ, զի ոչ են այնպիսիքն տեսուչք եկեղեցւոյ, այլ գայլք ապականիչք։ Եւ Բարեպաշտութեանդ քում ոչ է պարտական ձեռնադրութիւն առանց մեծի քննութեան, քանզի ուսաք, եթէ միտս ունիս և գիտութիւն և պատիւ և սէր և սատ ի թագաւորաց, և կարող ես ամենայնիւ ըմբերանել որ ի քէն ձեռնադրեցան՝ և անուղղայս գնայցեն, և ոչ ըստ պատուիրանի սրբոց առաքելոց և աւետարանչաց և չորից ուղղափառ ժողովոցն, որոց ճշմարիտ հաւատովք լուսաւորեալ պայծառանայ Կաթուղիկէ Եկեղեցի։ Բայց այլոց աշխարհականաց տգիտաց պարտէ մեղմով վկայել և զբարեպաշտութիւն ծանուցանել, զի մի ասիցեն յաւուր յանդիմանութեան, թէ չգիտէաք և չուսուցիք, և ապա յետ վկայելոյ՝ ի կամս անձին իւրոյ թողուլ ըստ գրեցելումն, զի առանց պատասխանատուութեան դատեսցին յարդար Դատաւորէն։

—Զայս ամենայն ոչ թէ ուսուցանել, այլ յիշեցուցանել, գիտութեանդ քում կամեցայ. ողջ լեր Ցերամբ, Բարեպաշտաօնակի՛ց մեր, և մեք ողջ եմք յողորմութենէն Աստուծոյ։

Buchdruckerei Fr. Lindner
Halbbanketts-
Garantie
General-E., Ausblick 69